**Արձանագրություն N 9**
**Կենտրոնացված կարգով սննդամթերքի ձեռքբերման «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/3» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի**
**Протокол № 9**

**Заседание комиссии по процедуре закупки продуктов питания с кодом «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/3» в централизованном порядке**

ք.Երևան — 24.12.2021թ. ժամը՝ 11:00

г.Ереван — 24.12.2021г. Время: 11:00

| | |
|---|---|
| Մասնակցում էին | |
| Հանձնաժողովի նախագահ՝ | Նելլի Ոսկանյան |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Աննա Ասատրյան, Անուշ Գևորգյան, Նարինե Արզումանյան, Արմինե Իսրաելյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ա. Համբարձումյան |
| Участвовали | |
| Председатель комиссии | Нелли Восканян |
| Члены комисии: | Анна Асатрян, Ануш Геворгян, Нарине Арзуманян, Армине Исраелян |
| Секретарь комисии: | А. Амбарцумян |

**1. Ընթացակարգի շրջանակներում «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ին շտկման ծանուցում ներկայացնելու վերաբերյալ**
**О представлении уведомления о корректировке несоответствия в рамках процедуры**

---

(Ն. Ոսկանյան, Н. Восканян)

1.1 Հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 10.12.2021թ., հրապարակված 14.12.2021թ., թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/108 որոշումը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց ընթացակարգի 6-րդ, 9-րդ, 10-րդ, 12-րդ և 21-րդ չափաբաժինների մասով սույն ընթացակարգի թիվ 4 արձանագրությամբ արձանագրված անհամապատասխանությունների մասով «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ին ներկայացնել անհամապատասխանությունների շտկում: Նշված չափաբաժինների մասով ներկայացված առաջարկվող ապրանքների ընդհանուր նկարագրի «ֆիրմային անվանումը» և «ապրանքային նշանը» սյունակներն անհրաժեշտ է լրացնել հրավերի 4.3 կետի 3-րդ ենթակետի պահանջներին համապատասխան՝ «ֆիրմային անվանումը» սյունակում անհրաժեշտ է նշել առաջարկվող ապրանքի ֆիրմային անվանումը, իսկ «ապրանքային նշանը» սյունակում նշել առաջարկվող ապրանքի ապրանքային նշան:

Միաժամանակ, հիմք ընդունելով «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ի բողոքի հիման վրա ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 17.12.2021թ. թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/110 որոշումը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց շտկման ներկայացնել նաև մասնակցի կողմից թույլ տրված մեկ այլ անհամապատասխանություն, այն է՝ 6,9,10,21-րդ չափաբաժինների մասով ներկայացված տեխնիկական բնութագրում նշված «կամ համարժեք» հղման փոխարեն հստակ նշել առաջարկվող ապրանքների ԳՕՍՏ-ը, առանց «կամ համարժեք» հղման:

1.2 Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված 21.12.2021 թվականի /ստացված 23.12.2021թ./ թիվ 26/26-1/21048-2021 գրությունը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց շտկման ծանուցումը մասնակցին ներկայացնել էլեկտրոնային աճուրդ համակարգում նշված nobilisgroup@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին:

1.3 Արձանագրված անհամապատասխանությունները ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկելու դեպքում հայտը կգնահատվի բավարար, հակառակ դեպքում կգնահատվի անբավարար և կմերժվի՝ համաձայն «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 42-րդ կետի: Անհամապատասխանությունների չշտկումը կդիտվի մասնակցի ստանձնած պարտավորությունների խախտում:

Принимая за основу решение ԳԲՔԱ-ԼՕ-2021/108 лица, рассматривающего жалобы, связанные с закупками РА, опубликованное 14.12.2021 г.оценочная комиссия решила представить ООО "Нобилис Груп" исправление несоответствий по части 6, 9, 10, 12 и 21 лотов данной процедуры. Графы «фирменное наименование» и «товарный знак» общего описания предлагаемых товаров, представленных в части указанных лотов, необходимо дополнить в соответствии с требованиями подпункта 3 пункта 4.3 приглашения, в графе «фирменное наименование» необходимо указать фирменное наименование предлагаемого товара, а в графе «товарный знак» указать товарный знак предлагаемого товара.

Одновременно, на основании жалобы ООО» Нобилис Груп " решение ԳԲՔԱ-ԼՕ-2021/110 лица, рассматривающего жалобы, связанные с закупками РА оценочная комиссия решила представить на поправку также другое несоответствие, допущенное участником, в части лотов 6,9,10,21 вместо указанного в технической характеристике выражения «или эквивалентно» четко указать ГОСТ предлагаемых товаров без выражения «или эквивалентно».

На основании письма Министерства финансов РА оценочная комиссия решила представить участнику уведомление о поправке по адрес электронной почты nobilisgroup@mail.ru, указанное в системе электронного аукциона.

1.2 Оценочная комиссия решила уведомлять участника, в срок указанный в приглашении / один рабочий день, до/ исправить несоответствия. В случае исправления несоотвестия, поданные заявки будут оценены как удовлетворительные, в противном случае заявки будут признаны неудовлетворительными и будут отклонены в соответствии с пунктом 42 процедуры, утвержденной Постановлением Правительства РА 526-N «Об организации процесса закупок». Неспособность исправить несоотвествия будет считаться как нарушение обязательств участника.

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:*
*Принято решение: за – 5, против – 0.*

Հանձնաժողովի

| | | |
|---|---|---|
| Նախագահ՝ | ________________ | Ն. Ոսկանյան<br>Н. Восканян |
| Անդամներ՝ | ________________ | Ա. Ասատրյան<br>А. Асатрян |
| | ________________ | Ա. Գևորգյան<br>А. Геворгян |
| | ________________ | Ն. Արզումանյան<br>Н. Арзуманян |
| | ________________ | Ա. Իսրաելյան<br>А. Исраелян |
| Քարտուղար՝ | ________________ | Ա. Համբարձումյան<br>А. Амбарцумян |